ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ m.aprikyan@prosecutor.am

ք. Երևան **15.02.2024թ.**

Որոշում N 2

«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **«ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/3»**

Մասնակից՝ **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**
/ՀՎՀՀ՝ 02294699, գործունեության հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 70/22/

1. «ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշում

ՀՀ դատախազության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 17.01.2024թ. հայտարարվել է «ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ն, որը հակադարձ աճուրդի արդյունքում 1-ին չափաբաժնի համար զբաղեցրել է առաջին տեղ: Գնահատող հանձնաժողովը 01.02.2024թ.-ին կայացած նիստում արձանագրել է, որ «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես, 1-ին չափաբաժնով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է <<Մածուցիկության ինդեքսը՝ 155-ից ոչ պակաս, Բռնկման ջերմաստիճանը՝ 235°C-ից ոչ ցածր, Սառեցման ջերմաստիճանը՝ մինուս 40°C-ից ոչ բարձր, Մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ 0.015%-ից ոչ ավել, Հիմնային թիվ՝ ոչ պակաս 9 մգ KOH/գ, Խտությունը 15°C դեպքում՝ 0.862-ից ոչ պակաս, 40 հատ 5 լիտրանոց և 50 հատ 1 լիտրանոց կամ 50 հատ 4 լիտրանոց և 50 հատ 1 լիտրանոց տարաներով>>, տեղեկատվությունները, որոնք չեն հստակեցնում ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 41-րդ կետը՝ հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ն ծանուցվել է, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկի արձանագրված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի 05.02.2024թ. կայացած նիստում արձանագրվել է, որ «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված, Հանձաժողովը որոշել է ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած:

2. Հիմնավորում և եզրահանգում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները...:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական

շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6- րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ հոդվածի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ հոդվածի համաձայն՝ եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ

մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ն՝ չշտկելով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունները և չներկայացնելով ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մ. ԱՓՐԻԿՅԱՆ